**ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**ԿՈԼԵԳԻԱ**

---

# ՈՐՈՇՈՒՄ

26 սեպտեմբերի 2017 թվականի **թիվ 128** քաղ. Մոսկվա

## Լիազորված տնտեսական օպերատորների ռեեստրում ընգրկելու վերաբերյալ դիմումի մասին

Եվրասիական տնտեսական միության մաքսային օրենսգրքի 434-րդ հոդվածի 1-րդ կետին համապատասխան՝ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիան **որոշեց.**

1. Հաստատել կից ներկայացվող՝

լիազորված տնտեսական օպերատորների ռեեստրում ընդգրկելու վերաբերյալ դիմումի ձեւը.

Լիազորված տնտեսական օպերատորների ռեեստրում ընդգրկելու վերաբերյալ դիմումի ձեւը լրացնելու կարգը

լիազորված տնտեսական օպերատորների ռեեստրում ընդգրկելու համար դիմումի մեջ նշված տեղեկությունները հաստատող փաստաթղթերի ցանկը:

2. Սահմանել, որ լիազորված տնտեսական օպերատորների ռեեստրում ընդգրկելու վերաբերյալ դիմումը ներկայացվում է էլեկտրոնային փաստաթղթի կամ թղթային կրիչով փաստաթղթի տեսքով:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում դրա պաշտոնական հրապարակման օրվանից 10 օրացուցային օրը լրանալուց հետո, սակայն «Եվրասիական տնտեսական միության մաքսային օրենսգրքի մասին» 2017 թվականի ապրիլի 11-ի պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից ոչ շուտ:

Եվրասիական տնտեսական հանձնաժողովի
կոլեգիայի նախագահ՝ Տ. Սարգսյան

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

Եվրասիական տնտեսական
հանձնաժողովի կոլեգիայի
2017 թվականի սեպտեմբերի 26-ի
թիվ 128 որոշմամբ

**ՁԵՎ**

**Լիազորված տնտեսական օպերատորների ռեեստրում ընդգրկելու վերաբերյալ դիմումի**

ԴԻՄՈՒՄ

լիազորված տնտեսական օպերատորների ռեեստրում ընդգրկելու վերաբերյալ

_____

(իրավաբանական անձի լրիվ եւ կրճատ (առկայության դեպքում) անվանումը)

_____

(ՀՎՀՀ (Հայաստանի Հանրապետության համար), ՎՀՀ (Բելառուսի Հանրապետության համար),
ԲՆՀ (Ղազախստանի Հանրապետության համար), ՀՎՆՀՀ (Ղրղզստանի Հանրապետության համար),
ՀՎԱՀ/ՀԿՊԾ (Ռուսաստանի Դաշնության համար))

խնդրում է իրեն ընդգրկել լիազորված տնտեսական օպերատորների ռեեստրում (այսուհետ՝ ռեեստր)՝

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| առաջին | | երկրորդ | | առաջին եւ երկրորդ | | երրորդ | |

տիպի (տիպերի) վկայականի (վկայականների) տրամադրմամբ, եւ հայտնում է Եվրասիական տնտեսական միության մաքսային օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 433-րդ հոդվածով սահմանված պայմանների կատարումը հաստատող տեղեկություններ:

## I. Ընդհանուր տեղեկություններ

| Թիվը՝ ը/կ | Ռեեստրում ընդգրկելու պայմանը | | Արժեքը եւ պայմանը պահպանելու վերաբերյալ նշումը | Նվազագույն արժեքը |
|---|---|---|---|---|
| 1 | 2 | | 3 | 4 |
| 1 | Արտաքին տնտեսական գործունեության իրականացում, տարի | | | 3 |
| | Մաքսային գործի բնագավառում գործունեության իրականացում որպես՝ | | | |
| | մաքսային ներկայացուցիչ, տարի | | | 3 |
| | ժամանակավոր պահպանման պահեստի տիրապետող, տարի | | | |
| | մաքսային պահեստի տիրապետող, տարի | | | |
| | մաքսային փոխադրող, տարի | | | 2 |
| | որոնց ընթացքում՝ | | | |
| | 1.1 | արտաքին տնտեսական գործունեություն իրականացնելիս, բացառությամբ ապրանքների փոխադրման ծառայությունների մատուցման հետ կապված գործունեության, յուրաքանչյուր տարի ներկայացվել է (հատ) ապրանքների հայտարարագիր, | | 10* |
| | | Եվրասիական տնտեսական միության մաքսային սահմանով տեղափոխված ապրանքների համախառն արժեքը յուրաքանչյուր տարի կազմում է **եվրո գումարին համարժեք մեծություն | | 500 000* |
| | 1.2 | ապրանքների փոխադրման ծառայությունների մատուցման հետ կապված արտաքին տնտեսական գործունեություն իրականացնելիս յուրաքանչյուր տարի ներկայացվել է (հատ) ապրանքների հայտարարագիր | | 250 |
| | 1.3 | մաքսային գործի բնագավառում որպես մաքսային ներկայացուցիչ գործունեություն իրականացնելիս յուրաքանչյուր տարի ներկայացվել է (հատ) ապրանքների հայտարարագիր | | 200* |

| Թիվը՝ ը/կ | Ռեեստրում ընդգրկելու պայմանը | | | Արժեքը եւ պայմանը պահպանելու վերաբերյալ նշումը | Նվազագույն արժեքը |
|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | | | 3 | 4 |
| | | ապրանքների՝ մաքսային հայտարարագրերում հայտագրված համախառն արժեքը յուրաքանչյուր տարի կազմում է **եվրո գումարին համարժեք մեծություն | | | 500 000* |
| | 1.4 | մաքսային գործի բնագավառում որպես ժամանակավոր պահպանման պահեստների, մաքսային պահեստների տիրապետողներ գործունեություն իրականացնելիս կատարվել է ապրանքների պահպանում, որոնց համախառն արժեքը յուրաքանչյուր տարի կազմում է **եվրո գումարին համարժեք մեծություն | | | 500 000* |
| | 1.5 | մաքսային գործի բնագավառում որպես մաքսային փոխադրող գործունեություն իրականացնելիս յուրաքանչյուր տարի ներկայացվել է (հատ) ապրանքների հայտարարագիր | | | 250 |
| 2 | Լիազորված տնտեսական օպերատորի պարտավորությունների կատարումը նախատեսվում է ապահովել հետեւյալ եղանակներով (լրացվում է, եթե ապահովում ներկայացնելը պարտադիր պայման է ռեեստրում ընդգրկելու համար) *** | | | | |
| | 2.1 | դրամական միջոցների (փողերի) մուտքագրում՝ եվրոյով գումարին համարժեք գումարի չափով | | | Օրենսգրքի 436-րդ հոդվածով սահմանված արժեքը |
| | 2.2 | բանկային երաշխիք՝ եվրոյով գումարին համարժեք գումարի չափով | | | |
| | 2.3 | երաշխավորություն՝ եվրոյով գումարին համարժեք գումարի չափով | | | |
| | 2.4 | գույքի գրավ՝ եվրոյով գումարին համարժեք գումարի չափով | | | |
| | 2.5 | 2.5.1 | պարտավորության կատարման ապահովում այլ եղանակով (նշել)՝ _____<br>եվրոյով գումարին համարժեք գումարի չափով | | |
| | | 2.5.2 | պարտավորության կատարման ապահովում այլ եղանակով (նշել)՝ _____<br>եվրոյով գումարին համարժեք գումարի չափով | | |
| 3 | Մաքսային վճարների, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերի, տույժերի, տոկոսների՝ սահմանված ժամկետում վճարման չկատարված պարտավորության բացակայություն Եվրասիական տնտեսական միության բոլոր անդամ պետություններում (այսուհետ՝ անդամ պետություններ) | | | | - |

| Թիվը՝ ը/կ | Ռեեստրում ընդգրկելու պայմանը | Արժեքը եւ պայմանը պահպանելու վերաբերյալ նշումը | Նվազագույն արժեքը |
|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 |
| 4 | Պարտքի (ապառքի) բացակայությունը՝ հարկերի ու վճարների վերաբերյալ, այն անդամ պետության օրենսդրությանը (հարկային օրենսդրությանը) համապատասխան, որտեղ գրանցված է դիմողը | | - |
| 5 | Մեկ տարվա ընթացքում դիմողին այնպիսի վարչական իրավախախտումների համար վարչական պատասխանատվության ենթարկելու փաստերի բացակայությունը բոլոր անդամ պետություններում, որոնք կատարելու համար պատասխանատվության ենթարկելն անդամ պետությունների օրենսդրությամբ սահմանված է որպես ռեեստրում ընդգրկելը մերժելու հիմք | | - |
| 6 | Դիմողի բաժնետերը հանդիսացող, դիմողի բաժնետոմսերի 10 եւ ավելի տոկոսն ունեցող, նրա հիմնադիրը (մասնակիցը), ղեկավարը, գլխավոր հաշվապահը հանդիսացող՝ անդամ պետությունների ֆիզիկական անձանց այն հանցագործությունների կամ քրեական իրավախախուտմների համար քրեական պատասխանատվության ենթարկելու փաստերի բացակայությունը բոլոր անդամ պետություններում, որոնց վարույթը վերապահված է մաքսային եւ այլ պետական մարմինների, եւ որոնք կատարելու համար պատասխանատվության ենթարկելն անդամ պետությունների օրենսդրությամբ սահմանված է որպես ռեեստրում ընդգրկելը մերժելու հիմք | | - |
| 7 | Ապրանքների հաշվառման համակարգը բավարարում է անդամ պետությունների՝ մաքսային կարգավորման վերաբերյալ օրենսդրությամբ սահմանված պահանջները, թույլ է տալիս մաքսային գործառնությունների կատարման ժամանակ մաքսային մարմիններին ներկայացված տեղեկությունները համադրել տնտեսական գործառնությունների անցկացման մասին տեղեկությունների հետ եւ ապահովում է այդ տեղեկությունների հասանելիությունը (այդ թվում՝ հեռահար) մաքսային մարմինների համար | | - |
| 8 | Դիմողի ֆինանսական կայունության համախառն ցուցանիշը, որը հաշվարկված է Օրենսգրքի 433-րդ հոդվածի 7-րդ կետով նախատեսված՝ ռեեստրում ընդգրվելուն հավակնող իրավաբանական անձի ֆինանսական կայունությունը եւ ֆինանսական կայունությունը բնութագրող ու այդ ռեեստրում ընդգրկելու համար անհրաժեշտ արժեքները որոշելու կարգին համապատասխան, բալ | | 50 |
| 9 | Ապրանքների ժամանակավոր պահպանման համար նախատեսված կառույցները, շինությունները (շինությունների մասերը) եւ (կամ) բաց հրապարակները (բաց հրապարակների մասերը) գտնվում են դիմողի մոտ՝ | | |
| | 9.1 սեփականության իրավունքով | | - |
| | 9.2 տնտեսավարման իրավունքով | | - |
| | 9.3 օպերատիվ կառավարման իրավունքով | | - |

| Թիվը՝ ը/կ | Ռեեստրում ընդգրկելու պայմանը | | Արժեքը եւ պայմանը պահպանելու վերաբերյալ նշումը | Նվազագույն արժեքը |
|---|---|---|---|---|
| 1 | 2 | | 3 | 4 |
| | 9.4 | առնվազն 1 տարի ժամկետով պայմանագրով՝ վարձակալության իրավունքով | | - |
| 10 | Պահպանվում են Օրենսգրքի 433-րդ հոդվածի 3-րդ կետի 4-րդ ենթակետով նախատեսված պահանջները, որոնք ներկայացվում են այն կառույցներին, շինություններին (շինությունների մասերին) եւ (կամ) բաց հրապարակներին (բաց հրապարակների մասերին), որոնց տարածքում իրականացվելու է ապրանքների ժամանակավոր պահպանումը, ավարտվելու է «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգի գործողությունը եւ (կամ) անցկացվելու է մաքսային հսկողություն՝ դիմողի տրանսպորտային միջոցների եւ աշխատողների նկատմամբ | | | - |
| 11 | Դիմողն ընդգրկվել է ռեեստրում (ընդգրկման ժամանակահատվածը՝ դիմումը ներկայացնելու պահի դրությամբ)՝ | | | |
| | 11.1 | առաջին տիպի վկայականի տրամադրմամբ, տարի | | 2 |
| | 11.2 | երկրորդ տիպի վկայականի տրամադրմամբ, տարի | | |
| | 11.3 | Մաքսային միության մաքսային օրենսգրքին համապատասխան վկայականի տրամադրմամբ, տարի | | |
| | 11.4 | երկրորդ կամ երրորդ տիպի վկայականի տրամադրմամբ | | - |
| 12 | Դիմումը ներկայացնելու օրվան նախորդող 1 տարվա ընթացքում ռեեստրից հանելու փաստի բացակայությունը | | | - |

* Մաքսային կարգավորման վերաբերյալ այն անդամ պետության օրենսդրությամբ, որի մաքսային մարմին ներկայացվում է դիմումը, կարող է սահմանվել այլ նվազագույն արժեք՝ Օրենսգրքի 433-րդ հոդվածին համապատասխան:

** Հաշվարկվում է անդամ պետության կենտրոնական (ազգային) բանկի կողմից սահմանված՝ դիմումը ներկայացնելու օրվա դրությամբ գործող փոխարժեքով:

*** Եթե անդամ պետությունների՝ մաքսային կարգավորման վերաբերյալ օրենսդրությամբ սահմանված է, որ լիազորված տնտեսական օպերատորի պարտավորությունների կատարումն ապահովվում է որոշակի եղանակով (եղանակներով)՝ Օրենսգրքի 436-րդ հոդվածի 6-րդ կետին համապատասխան, ապա ապահովման եղանակի ընտրությունը կատարվում է միայն այդ անդամ պետության օրենսդրությամբ սահմանված եղանակներից:

## II. Տեղեկություններ դիմողի բաժնետերը հանդիսացող, դիմողի բաժնետոմսերի 10 եւ ավելի տոկոսն ունեցող, նրա հիմնադիրը (մասնակիցը), ղեկավարը, գլխավոր հաշվապահը հանդիսացող՝ անդամ պետությունների ֆիզիկական անձանց մասին

| Թիվը՝ ը/կ | Ազգանունը, անունը, հայրանունը (առկայության դեպքում) (անձը հաստատող փաստաթղթին համապատասխան) | Ծննդյան ամսաթիվն ու վայրը (անձը հաստատող փաստաթղթին համապատասխան) | Դիմողի հետ կապը (բաժնետեր, հիմնադիր (հիմնադիրներ), ղեկավար, գլխավոր հաշվապահ) | Ծանոթագրություն |
|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 |
| 1 | | | | |
| 2 | | | | |

## III. Տեղեկություններ՝ ֆինանսական կայունության ցուցանիշների արժեքների եւ ֆինանսական կայունության համախառն ցուցանիշի մասին

| Թիվը՝ ը/կ | Ցուցանիշի անվանումը | Ցուցանիշի միջին արժեքը 3 տարվա համար (հաշվարկային) | Ցուցանիշի չափորոշիչը (նվազագույն) | Ցուցանիշի արժեքը բալային համակարգում | Ցուցանիշի փաստացի արժեքը (բալերով) |
|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 |
| 1 | Զուտ ակտիվների չափը | | | 30 | |
| 2 | Կանոնադրական կապիտալի չափը | | | 10 | |
| 3 | Հիմնական միջոցների մնացորդային արժեքը | | | 10 | |
| 4 | Ինքնավարության գործակիցը | | 0.30 | 10 | |
| 5 | Ընդհանուր (ընթացիկ) իրացվելիության գործակիցը | | 1.00 | 10 | |
| 6 | Սեփական կապիտալի շահութաբերությունը, տոկոս | | 5.00 | 5 | |
| 7 | Ֆինանսական կայունության գործակիցը | | 0.60 | 15 | |

| Թիվը՝ ը/կ | Ցուցանիշի անվանումը | Ցուցանիշի միջին արժեքը 3 տարվա համար (հաշվարկային) | Ցուցանիշի չափորոշիչը (նվազագույն) | Ցուցանիշի արժեքը բալային համակարգում | Ցուցանիշի փաստացի արժեքը (բալերով) |
|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 |
| 8 | Սեփական շրջանառու ակտիվներով ընթացիկ գործունեությունն ապահովելու գործակիցը | | 0.10 | 5 | |
| 9 | Սեփական կապիտալի շարժունակության գործակիցը | | 0.20 | 5 | |
| 10 | Ռեեստրում ընդգրկվելուն հավակնող իրավաբանական անձի հանրագումարային ցուցանիշը (առնվազն 50 բալ) | | | | |

## IV. Տեղեկություններ՝ ապրանքների ժամանակավոր պահպանման համար նախատեսված կառույցների, շինությունների (շինությունների մասերի) եւ (կամ) բաց հրապարակների (բաց հրապարակների մասերի) մասին

| Թիվը՝ ը/կ | Օբյեկտի գտնվելու վայրի հասցեն | Սեփականության, տնտեսավարման, օպերատիվ կառավարման կամ վարձակալության իրավունքով գտնվելը հաստատող փաստաթղթի համարն ու ամսաթիվը | Փաստաթղթի (վարձակալության պայմանագրի) գործողության ժամկետը |
|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 |
| 1 | | | |
| 2 | | | |

## V. Տեղեկություններ՝ առանձնացված ստորաբաժանումների եւ (կամ) մասնաճյուղերի մասին

| Թիվը՝ ը/կ | Առանձնացված ստորաբաժանման եւ (կամ) մասնաճյուղի անվանումը (լրիվ կամ կրճատ՝ առկայության դեպքում) | Առանձնացված ստորաբաժանման եւ (կամ) մասնաճյուղի համարը՝ տրված անդամ պետության հարկային մարմնի (պետական եկամուտների մարմնի) կողմից |
|---|---|---|
| 1 | 2 | 3 |
| 1 | | |
| 2 | | |

## VI. Սույն դիմումի մեջ նշված տեղեկությունները հաստատող փաստաթղթերը

| Թիվը՝ ը/կ | Փաստաթղթերի անվանումները | Թերթերի քանակը |
|---|---|---|
| 1 | 2 | 3 |
| 1 | Իրավաբանական անձի հիմնադիր փաստաթղթերի պատճենները | |
| 2 | Այն փաստաթուղթը, որով հաստատվում է պարտքի (ապառքի) բացակայությունը՝ հարկերի ու վճարների վերաբերյալ, այն անդամ պետության օրենսդրությանը (հարկային օրենսդրությանը) համապատասխան, որտեղ գրանցված է դիմողը | |
| 3 | Այն փաստաթղթերը (փաստաթղթերի պատճենները), որոնցով հաստատվում է ֆինանսական կայունության ցուցանիշների եւ ֆինանսական կայունության համախառն ցուցանիշի արժեքների հաշվարկը | |
| 4 | Այն փաստաթղթերը, որոնք տրվել են անդամ պետության իրավասու մարմնի կողմից, եւ որոնցով հաստատվում է դիմողի բաժնետերը հանդիսացող, դիմողի բաժնետոմսերի 10 եւ ավելի տոկոսն ունեցող, նրա հիմնադիրը (մասնակիցը), ղեկավարը, գլխավոր հաշվապահը հանդիսացող՝ անդամ պետությունների ֆիզիկական անձանց քրեական պատասխանատվության ենթարկելու փաստերի բացակայությունը | |
| 5 | Ապրանքների հաշվառման այն համակարգի առկայությունը հաստատող փաստաթղթերը, որը բավարարում է անդամ պետության՝ մաքսային կարգավորման վերաբերյալ օրենսդրությամբ սահմանված պահանջները, թույլ է տալիս մաքսային գործառնությունների կատարման ժամանակ մաքսային մարմիններին ներկայացված տեղեկությունները համադրել տնտեսական գործառնությունների անցկացման մասին տեղեկությունների հետ, եւ որն ապահովում է այդ տեղեկությունների հասանելիությունը (այդ թվում՝ հեռահար) մաքսային մարմինների համար: | |
| 6 | Այն փաստաթղթերի պատճենները, որոնցով հաստատվում է երկրորդ կամ երրորդ տիպի վկայական ստանալուն հավակնող դիմողի մոտ | |

| | | |
|---|---|---|
| | ապրանքների ժամանակավոր պահպանման, «մաքսային տարանցում » մաքսային ընթացակարգի գործողությունն ավարտելու եւ (կամ) մաքսային հսկողություն անցկացնելու համար նախատեսված կառույցների, շինությունների (շինությունների մասերի) եւ (կամ) բաց հրապարակների (բաց հրապարակների մասերի) առկայությունը | |
| 7 | Այլ փաստաթղթեր | |

| | | |
|---|---|---|
| _____ | _____ | _____ |
| (դիմողի ղեկավարի պաշտոնը) | (դիմողի ստորագրությունը) | (դիմողի Ա.Ա.Հ.) |

«__» _____ 20__ թվականի

_____

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

Եվրասիական տնտեսական
հանձնաժողովի կոլեգիայի
2017 թվականի սեպտեմբերի 26-ի
թիվ 128 որոշմամբ

**ԿԱՐԳ**

**լիազորված տնտեսական օպերատորների ռեեստրում ընդգրկելու վերաբերյալ դիմումի ձեւը լրացնելու**

1. Լիազորված տնտեսական օպերատորների ռեեստրում ընդգրկելու վերաբերյալ դիմումի (այսուհետ համապատասխանաբար՝ ռեեստր, դիմում) մեջ նշվում են ռեեստրում ընդգրկվելուն հավակնող իրավաբանական անձի լրիվ եւ կրճատ (առկայության դեպքում) անվանումները (այսուհետ՝ դիմող)՝ հիմնադիր փաստաթղթերին համապատասխան, ինչպես նաեւ Եվրասիական տնտեսական միության անդամ պետության (այսուհետ՝ անդամ պետություն) հարկային մարմնի (պետական եկամուտների մարմնի) կողմից տրված համարը:

2. Դիմողի կողմից ընտրվում է հարցվող տիպի վկայականի (հարցվող տիպերի վկայականների) տարբերակներից մեկը՝ համապատասխան դաշտում դնելով «✓» նշանը, ընդ որում, մյուս դաշտերում դրվում է գծիկի նշանը՝ «-»:

3. Դիմումի I բաժնում՝ աղյուսակի 3-րդ սյունակում, նշվում են՝

1-ին (այդ թվում՝ 1.1-1.5 ենթակետերում), 2-րդ, 8-րդ կետերում եւ 11.1-11.3 ենթակետերում՝ ռեեստրում ընդգրկելու պայմանների պահպանումը հաստատող արժեքները

3-7-րդ, 9-րդ, 10-րդ կետերում, 11.4 ենթակետում եւ 12-րդ կետում՝ պայմանները պահպանելու վերաբերյալ նշումներ՝ «✓» նշանի ձեւով՝ ռեեստրում ընդգրկելու համապատասխան պայմանների պահպանումը հաստատելու դեպքում:

Դիմումի I բաժնի 1-ին (այդ թվում՝ 1.1-1.5 ենթակետերում), 2-րդ, 9-րդ կետերում եւ 11.1-11.3 ենթակետերում նշված՝ ռեեստրում ընդգրկելու պայմաններից առնվազն երկուսը դիմողի կողմից կատարելու դեպքում այդ կետերից ու ենթակետերից յուրաքանչյուրում՝ աղյուսակի 3-րդ սյունակում, նշվում է համապատասխան արժեքը, կամ կատարվում է նշում՝ պայմանը պահպանելու մասին:

Արժեքի բացակայության, ինչպես նաեւ այն դեպքում, երբ հարցվող տիպի վկայականի համար, Եվրասիական տնտեսական միության մաքսային օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 433-րդ հոդվածին համապատասխան, դա պարտադիր պայման չի համարվում ռեեստրում ընդգրկելու համար, դիմումի I բաժնում՝ աղյուսակի 3-րդ սյունակում, դրվում է գծիկի նշանը՝ «-»:

4. Դիմումի I բաժնի 1.1 եւ 1.3 ենթակետերում՝ աղյուսակի 3-րդ սյունակում, պայմաններից մեկի արժեքը նշելը պարտադիր է, իսկ մյուս պայմանի արժեքը նշվում է դիմողի ցանկությամբ:

5. Դիմումի I բաժնի 2-րդ կետում՝ աղյուսակի 3-րդ սյունակում, ռեեստրում ընդգրկվելու պայմանների պահպանումը հաստատող արժեքները նշվում են այն դեպքում, երբ դա պարտադիր պայման է ռեեստրում ընդգրկվելու համար:

Այն դեպքում, երբ լիազորված տնտեսական օպերատորի պարտավորությունների կատարումը նախատեսվում է ապահովել դիմումի I բաժնի 2.1-2.4 ենթակետերում նշված եղանակներից տարբեր եւ այն անդամ պետության օրենսդրությամբ նախատեսված եղանակներով, որի մաքսային մարմին ներկայացվել է դիմումը, այդ եղանակների վերաբերյալ տեղեկատվությունը բերվում է դիմումի I բաժնի 2.5 ենթակետում (2-րդ սյունակում)՝ աղյուսակի 3-րդ սյունակում նշելով համապատասխան արժեքը:

6. Դիմումի I բաժնի 8-10-րդ կետերում՝ աղյուսակի 3-րդ սյունակում, պայմանների պահպանման վերաբերյալ արժեքները կամ նշումները դիմողի կողմից նշվում են երկրորդ կամ երրորդ տիպի վկայականի տրամադրմամբ՝ ռեեստրում ընդգրկելու վերաբերյալ դիմում ներկայացնելու դեպքում:

7. Դիմումի I բաժնի 11.1-11.3 կետերում՝ աղյուսակի 3-րդ սյունակում, արժեքները նշվում են երրորդ տիպի վկայականի տրամադրմամբ՝ առաջին եւ (կամ) երկրորդ տիպի վկայական ունեցող դիմողի կողմից ռեեստրում ընդգրկելու վերաբերյալ դիմում ներկայացնելու կամ Մաքսային միության մաքսային օրենսգրքին համապատասխան ռեեստրում ընդգրկված դիմողի կողմից դիմում ներկայացնելու դեպքում:

8. Լիազորված տնտեսական օպերատոր հանդիսացող, երկրորդ կամ երրորդ տիպի վկայական ունեցող դիմողը, առաջին տիպի վկայականի տրամադրմամբ՝ ռեեստրում ընդգրկելու վերաբերյալ դիմում ներկայացնելու դեպքում, դիմումի I բաժնում՝ աղյուսակի 3-րդ սյունակում, լրացնում է միայն 2-րդ կետը եւ 11.4 ենթակետը: Ընդ որում, դիմումի II - VI բաժինները չեն լրացվում:

9. Դիմումի II բաժնում՝ աղյուսակի մեջ, նշվում են տեղեկություններ՝ դիմողի բաժնետերը հանդիսացող, դիմողի բաժնետոմսերի 10 եւ ավելի տոկոսն ունեցող, նրա հիմնադիրը (մասնակիցը), ղեկավարը, գլխավոր հաշվապահը հանդիսացող՝ անդամ պետությունների ֆիզիկական անձանց մասին:

Ընդ որում, Ռուսաստանի Դաշնության իրավաբանական անձ հանդիսացող դիմողի կողմից աղյուսակի 3-րդ սյունակում լրացուցիչ նշվում են համապատասխան անձանց գրանցման հասցեն՝ ըստ բնակության վայրի, եւ (կամ) գտնվելու վայրը՝ անձը հաստատող փաստաթղթերի համաձայն:

10. Դիմումի III բաժնում՝ աղյուսակի 3-րդ, 4-րդ (1-3-րդ կետերում) եւ 6-րդ սյունակներում նշվում են տեղեկություններ՝ ֆինանսական կայունության ցուցանիշների արժեքների եւ ֆինանսական կայունության համախառն ցուցանիշի արժեքների վերաբերյալ, որոնք հաշվարկված են Օրենսգրքի 433-րդ հոդվածի 7-րդ կետով նախատեսված՝ ռեեստրում ընդգրվելուն հավակնող իրավաբանական անձի ֆինանսական կայունությունը եւ ֆինանսական կայունությունը բնութագրող ու այդ ռեեստրում ընդգրկելու համար անհրաժեշտ արժեքները որոշելու կարգին համապատասխան:

Այն դեպքում, երբ ֆինանսական կայունությունը պարտադիր պայման չէ ռեեստրում ընդգրկելու համար, աղյուսակի 3-րդ, 4-րդ (1-3-րդ կետերում) եւ 6-րդ սյունակներում դրվում է գծիկի նշանը՝ «-»:

11. Դիմումի IV բաժինը դիմողի կողմից լրացվում է երկրորդ կամ երրորդ տիպի վկայականի տրամադրմամբ՝ ռեեստրում ընդգրկելու վերաբերյալ դիմում ներկայացնելու դեպքում:

Այն դեպքում, երբ օբյեկտները գտնվում են դիմողի վարձակալության տակ, աղյուսակի 4-րդ սյունակում նշվում է այն ժամկետը, որով կնքված է վարձակալության պայմանագիրը, մյուս դեպքերում դրվում է գծիկի նշանը՝ «-»:

12. Դիմողի մոտ առանձնացված ստորաբաժանումների եւ (կամ) մասնաճյուղերի առկայության դեպքում դրանց վերաբերյալ, ինչպես նաեւ անդամ պետությունների հարկային մարմինների (պետական եկամուտների մարմինների) կողմից տրված համարների (այդպիսի համարների առկայության դեպքում) վերաբերյալ տեղեկությունները նշվում են դիմումի V բաժնում: Առանձնացված ստորաբաժանումների եւ (կամ) մասնաճյուղերի բացակայության դեպքում դիմումի V բաժնում՝ աղյուսակի բոլոր սյունակներում, դրվում է գծիկի նշանը՝ «-»:

13. Դիմումի VI բաժնում՝ աղյուսակի 3-րդ սյունակում, նշվում է դիմումի մեջ նշված տեղեկությունները հաստատող փաստաթղթերի թերթերի քանակը կամ դրվում է գծիկի նշանը՝ «-», այն դեպքում, երբ համապատասխան փաստաթղթերը չեն կցվում դիմումին:

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

Եվրասիական տնտեսական
հանձնաժողովի կոլեգիայի
2017 թվականի սեպտեմբերի 26-ի
թիվ 128 որոշմամբ

**ՑԱՆԿ**

**լիազորված տնտեսական օպերատորների ռեեստրում ընդգրկելու համար դիմումի մեջ նշված տեղեկությունները հաստատող փաստաթղթերի**

1. Իրավաբանական անձի հիմնադիր փաստաթղթերի պատճենները:

2. Այն փաստաթուղթը, որով հաստատվում է պարտքի (ապառքի) բացակայությունը՝ հարկերի ու վճարների վերաբերյալ՝ Եվրասիական տնտեսական միության այն անդամ պետության (այսուհետ՝ անդամ պետություններ) օրենսդրությանը (հարկային օրենսդրությանը) համապատասխան, որտեղ գրանցված է դիմողը (ներկայացվում է այդպիսի փաստաթղթի առկայության դեպքում՝ դիմողի ցանկությամբ): Բելառուսի Հանրապետության իրավաբանական անձ հանդիսացող դիմողը նշված փաստաթղթերը չի ներկայացնում:

3. Այն փաստաթղթերը (փաստաթղթերի պատճենները), որոնցով հաստատվում է ֆինանսական կայունության ցուցանիշների եւ ֆինանսական կայունության համախառն ցուցանիշի արժեքների հաշվարկը (ներկայացվում են Բելառուսի Հանրապետության իրավաբանական անձ հանդիսացող դիմողի կողմից):

4. Այն փաստաթղթերը, որոնք տրվել են անդամ պետության իրավասու մարմնի կողմից, եւ որոնցով հաստատվում է դիմողի բաժնետերը հանդիսացող, դիմողի բաժնետոմսերի 10 եւ ավելի տոկոսն ունեցող, նրա հիմնադիրը (մասնակիցը), ղեկավարը, գլխավոր հաշվապահը հանդիսացող՝ անդամ պետությունների ֆիզիկական անձանց քրեական պատասխանատվության

ենթարկելու փաստերի բացակայությունը (ներկայացվում է այդպիսի փաստաթղթերի առկայության դեպքում՝ դիմողի ցանկությամբ):

5. Դիմողի մոտ ապրանքների հաշվառման այն համակարգի առկայությունը հաստատող փաստաթղթերը, որը բավարարում է անդամ պետության՝ մաքսային կարգավորման վերաբերյալ օրենսդրությամբ սահմանված պահանջները, թույլ է տալիս մաքսային գործառնությունների կատարման ժամանակ մաքսային մարմիններին ներկայացված տեղեկությունները համադրել տնտեսական գործառնությունների անցկացման մասին տեղեկությունների հետ, եւ որն ապահովում է այդ տեղեկությունների հասանելիությունը (այդ թվում՝ հեռահար) մաքսային մարմինների համար (ներկայացվում են այն դեպքում, երբ այդպիսի փաստաթղթեր կազմելը նախատեսված է անդամ պետության՝ մաքսային կարգավորման վերաբերյալ օրենսդրությամբ):

6. Այն փաստաթղթերի պատճենները, որոնցով հաստատվում է երկրորդ կամ երրորդ տիպի վկայական ստանալուն հավակնող դիմողի մոտ ապրանքների ժամանակավոր պահպանման, «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգի գործողությունն ավարտելու եւ (կամ) մաքսային հսկողություն անցկացնելու համար նախատեսված կառույցների, շինությունների (շինությունների մասերի) եւ (կամ) բաց հրապարակների (բաց հրապարակների մասերի) առկայությունը:

7. Այլ փաստաթղթեր (ներկայացվում են դիմողի ցանկությամբ):

Ծանոթագրություն: Սույն ցանկում ներկայացված փաստաթղթերը կարող են չներկայացվել դիմողի կողմից, եթե այդ փաստաթղթերի մասին տեղեկությունները եւ (կամ) դրանց մեջ նշված տեղեկությունները կարող են ստացվել մաքսային մարմինների կողմից այն տեղեկատվական համակարգերից, որոնք օգտագործվում են մաքսային մարմինների կողմից, ինչպես նաեւ Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների պետական մարմինների (կազմակերպությունների) տեղեկատվական համակարգերից՝ տեղեկատվական փոխգործակցության շրջանակներում: